





**ԳԷՈՐԳ ԳԱՌԵԱՆ**

**ՆԱՐՆՁԱՍՏԱՆՆԵՐՈՒՆ  
ԿԱՆՉԸ**




**Մայրենի Հրատարակչատուն  
Ուլլիսիմ  
2002**





**Հեղինակը՝ Գեորգ Գառեան**



## Բովանդակություն

<b>Այս Կանչը</b>	9
<b>ՊԱՏՄՈՒԱԾՔՆԵՐ ԵՒ ՅՈՒՇԵՐ</b>	
Թուրքի Մարգարէացումը	13
Լաւաշը	19
Փառքէն Հօր	22
«Տէլի» Յակոբը	25
Կաթնեղբայրը	29
Դառնութեան Բաժակով	33
Տանապետ Ռօժէ	56
Աճիւտան Մանժէն	62
Տեղակալ Լըրու	68
Պարահանդէսը	78
Աւետաբերը	83
Արեւածաղիկը	88
Գուրգէնն Ալ Ընդվզեցաւ	92
Մեղաւորը	99
«Քէլ» Պապիկը	103
Մօրս Կաթը	110
Բուին Կանչը	113
Ապօրինի Բաղիկները	116
Արագիլները	122
Դուն Մի' Գար	126
Մատանին	131
Նէնէթը	135
Կեանքիս Բովէն	139
Եղեռնախոց	142
Համագգեստը	146
Կեանքիս Գիրքէն	149
Հօրս Քենեկալը	154
Իմ Մանկութեան Ընկերը	159
Մօրս Ծանօթուհին	163
«Մոխրագոյնը»	166
«Եփրատ»ին Թաղումը	170
«Արմէնեան» Վարժարանը	173
Կիսանդրին	177
Հայկանուչ Հօրաքոյրս	182

---

**ՆԱՐՆՁԱՍՏԱՆՆԵՐՈՒՆ ԿԱՆՉԸ**



---

**ԼՈՒՍԱՆՑՔՆԵՐԷՆ**

<i>Եղեւինները</i>	187
<i>Սիրելի Աբբարիկ</i>	189
<i>Սիւրբի Հեռաւոր Բարեկամ</i>	193
<i>1937-ի Ձմեռն էր</i>	196
<i>Մոնթրէալի Կարօտը</i>	198
<i>Օրօ՛րը</i>	201
<i>Բարեկիրթ Հաւերը</i>	203
<i>Հին Բայց Միշտ Նոր</i>	205
<i>Այդ Ամառ</i>	208
<i>Տանութը Տարին</i>	210
<i>Ալեքսանտրէթը</i>	213
<i>Կլենտէյլ Եմ</i>	215
<i>Իմ Հին Ծանօթ</i>	217
<i>Ճիշդ Վաթսուն Տարի Առաջ</i>	220
<i>Թոռնուհիս</i>	223
<i>Քանի Մը Ամիս Առաջ</i>	225
<i>Հայ Մէյրէմը</i>	227
<i>Մանկապարտէզի Երազային Աշխարհ</i>	229
<i>Ասք Մատիտի Մասին</i>	231
<i>Թռչնազգիներու Մէջ</i>	233
<i>Սանթա-Մոնիքա</i>	235
<i>Իւրաքանչիւր Տարեց</i>	237
<i>Ընթացիկ Տարուան</i>	240
<i>Իմ Համերկրացի</i>	242
<i>Հորվուտ Բնակելէս Ի Վեր</i>	244
<i>Այս Քանի Տարի է</i>	246
<i>Ծաւալով Մեծ</i>	248
<i>Լեռնային Ղարաբաղի</i>	251
<i>Ցերեկները</i>	253
<i>Եօթանասուն Տարի</i>	255
<i>Ներկայ Հայաստանի</i>	257
<i>Լոս-Անճելըսեան</i>	259
<i>Ալեքսանտրէթին</i>	261
<i>Կիրակի է</i>	263
<i>Ատենէ Մը Ի Վեր</i>	266
<i>Ամրան Կիզիչ</i>	269

**ԳԱՄՓՈՐԷՆ**


<i>Վարքի Նիշ</i>	273
------------------	-----




**ՆԱԲՆՁԱՍՏԱՆՆԵՐՈՒՆ ԿԱՆՉԸ**

---

<i>Ամրան Վերջերուն էր</i>	276
<i>Կը Պատմուի Թէ</i>	279
<i>Մանկապատանեկան Իմ Օրերուն</i>	282
<i>Եղեռնէն Վերապրողներու</i>	285
<i>Արեւը Բարձրացեր էր</i>	287
<i>Յամի Տեառն 2001</i>	289
<i>Իմ Համերկրացիները</i>	291
<i>«Եէ՛չ», Վահան, «Եէ՛չ»</i>	294






## Չօն


Նարնջենիի իմ համեստ բերքին՝


Չորս տան սիւներ  
Յիվհաննէսիս  
Արամիս  
Տիրանիս  
Արմէնիս  
եւ ութը թող ու մէկ ծողիս



## Երախտիք

Հեղինակը շնորհապարտ է Չորք Մարզպանի Հայրենակցական Միության՝  
«Նարնջաստաններուն Կանչը»-ին տպագրական ծախսերուն անոր կատարած  
նիւթական օժանդակութեան համար:





ՆԱԲԵՋԱՍՏԱՆՆԵՐՈՒՆ ԿԱՆՉԸ

# Այս Կանչը

Գէորգ Գառեան (Գարասարգիսեան) իր գրութիւններուն ընդ-  
մէջէն կը թողու այն տպաւորութիւնը՝ թէ ներկային մէջ շարունակ  
կ'ապրի անցեալը և անցեալն ու ներկան կ'ազուցէ իրարո՛ւ՝ այնպիսի  
ինքստպութեամբ մը, որ շունչ կու տայ իր պապենական Չորք  
Մարգպանի նարնջաստաններու բոյրին:

Որքան ալ տիրական այդ բոյրը՝ հետագայ էջերը ընթերցողին  
հոգիին կը բանան նաև առանձնայատուկ և առաջինէն տարբեր  
գոյները արևելեան բանաստեղծական քաղաք Հալէպի և բազմաթիւ  
մշակոյթներու միաձուլումով իր ուրոյն մշակոյթը փնտռող ու դեռ  
չգտած Լոս Անձելըսի և շրջակայ քաղաքներուն:


Այս հատորին մէջ պայմանական ենթաբաժանումներով մէկ-  
տեղուած գրութիւնները՝ հատընտիր մը իր վաստակէն,- հոգիի  
խորունկ կանչեր են՝ քի՛չ անգամ առանձնական: Հաւաքականու-  
թիւնն է մտահոգութեան առանցքը և թիրախը Գառեանի. հա՛յ  
հաւաքականութիւնը, որուն ներկայով և մանաւանդ ապագայով կը  
տագնապի ան, երբ կը քրքրէ իր և իրեն նման պապենական հողերէն  
դուրս քշուած տարագիր հայոց փորձառութեան էջերը՝ դասեր  
քաղելու և զանոնք փոխանցելու մտադրութեամբ:


Բանաստեղծաշունչ նկարագրականները կը մատնեն զգայուն  
հոգին հեղինակին, որ 1987-ին «Մրմունջներ» անունին տակ արդէն  
հանրութեան ներկայացուցած է իր չափածոյ ստեղծագործութիւն-  
ներէն փունջ մը:

Գառեան իր գրական շնորհը յղկած ու զարգացուցած է ԻՆՔ-  
ՆԱՇԽԱՏՈՒԹԵԱՄԲ և յամառ ընթերցանութեամբ, որովհետև թըր-  
քութիւնը Չորք Մարգպանի հետ իրմէ խլած է նաև պատեհութիւնը  
իր ուսումը շարունակելու:

Հրապարակագրական և թարգմանական իր առաջին փորձերը  
կատարելէ ետք Հալէպի «Եփրատ» և՛ անոր փակումէն ետք՝ «Սու-  
րիա» օրաթերթերուն մէջ, մասնակից դարձած է «Երկիր» գրական  
պարբերագիրքին ծննդոցին, դա՛րձեալ Հալէպ, 1956-ին, անոր  
էջերուն յանձնելով իր առաջին պատմութեանը:

Ընթերցողներու հետ հաղորդակցելու և իր ըսելիքին համար  
աւելի մեծաթիւ լսողներ գտնելու մղումով, կեանքի պայմանները ուր  
որ ալ առաջնորդած են զինք՝ աշխատակցութիւն բերած է տեղական  
հայ մամուլին՝ տոմսերով, թարգմանութիւններով, չափածոյ գրու-  
թիւններով, պատմութեանը և մա՛նաւանդ ծուէն ծուէն քակուող  
յուշերով:





---


**ՆԱՐՆՁԱՍՏԱՆՆԵՐՈՒՆ ԿԱՆՉԸ**

---


Այսպես՝ ՊԷյրութի մէջ «Զարթօնք», «Ծիրակ», «Մեր Նշանաբանն է Յառաջ» և «Սիհուք» թերթերը, Մոնթրէալի մէջ «Ապագայ» շաբաթաթերթը, իսկ Լոս Անճելըսի մէջ «Նոր Հայաստան»ը, «Նոր Կեանք»ը և մասնատրաբար «Նոր Օր»ը եղած են հիւրընկալները իր գրութիւններուն:

Գառեանի այս հատընտիր ժողովածուին կարգ մը էջերը պիտի ապրին զուգահեռաբար մեռնիլ չուզող այն երագին, որ թաթաւուն է պատկերներովը և բոյրովը պապենական կորուսեալ նարնջաստաններու:




**Դոկտ. Վաչէ Ղազարեան**








ՊԱՏՄՈՒԱԾՔՆԵՐ  
ԵՒ  
ՅՈՒՇԵՐ





## Թուրքի Մարգարէացունը

Իմ համաքաղաքացի Միսաք Վասիլեանն էր խօսողը. բազմամեծ ընտանիքի մը վերջին շառաւիղը, տարագրութեան ողբերգութենէն ետք:

«Տասնչորս տարեկան պատանի մըն էի: 1915-ի գարնան էր: Թուրք իթիբիհատական իշխանութեան՝ պատերազմի ենթադրեալ ճակատէն հեռացնելու եւ «անվտանգ» շրջաններ տեղափոխելու հրահանգը հասած էր նաեւ մեր քաղաքին, ծովեզերքի մօտ՝ Չորք-Մարգարանի (Տօրթ-Շոր) բնակչութեան:


«Ամիսներ առաջ, ամէլէ թապուրը-ին համար տարուած էին բոլոր երիտասարդներն ու աշխատելու ատակ տարեց այրերը: Ծիւղալային այդ հաւաքի ատեն, իմ հասակիս կարճութիւնն ու հագած կարճ տաբատս՝ շարքէն դուրս հանել տուին զիս՝ իբրեւ անչափահաս «չօճուխ», մանչուկ:


«Իրիկնամուտ մըն էր. մուկնետիկին հազորդումէն անմիջապէս ետք, մեծ հայրս գործի էր անցած ու իր գերդաստանին կին ու անչափահաս անդամներուն անհրաժեշտ գոյքերն ու պարէնը բարձած էր հօրս ճոնչացող սայլակին վրայ եւ գոյգ մը եզ լծած անոր: Արեւածագէն առաջ, ունեւտները՝ փոխադրամիջոցներով, չքաւորները՝ հետիտոն, կեդրոնական շուկայի հրապարակին վրայ հաւաքուած էինք՝ տոհմ առ տոհմ: Խայտաբղէտ բազմութիւն մըն էր այդ՝ ծերերու, կիներու, դեռատի աղջիկներու, հարսերու. շատերու գրկին՝ ծծուոր մանուկներ, որոնց դէմքերուն վրայ մուսլիմ գիշերուան մը պէս նստած էր տիպուրութիւնը:

«Երկու թէ երեք ձիաւոր ոստիկաններ դաժան հրահանգներով աճապարել կու տային մեզ՝ վայրկեան մը առաջ ճամբայ իյնալու: Ու կանացի սարսափահար ճիչերու սիրտ բզբտող շեշտերովը լեցուած հրապարակէն, մարդկային այդ զանգուածը սկսաւ շարժիլ դէպի արեւելք՝ երբեմն հարթ, երբեմն վերելքներով տանջալից քայլերով:

«Երկրորդ իրիկնամուտին, մեծ հօրս համաձայն, Քաթմա կոչուող բնակավայրին մօտերը գտնուող կիրճն էինք հասեր, երբ ոստիկանները պարտադրեցին գիշերել հոն: Ուշադրութիւնս գրաւեց մեր կարաւանին նօսրացած վիճակը: Ե՞տ էին մնացած, թէ՛ յաւիտեանս դադրած էին քայլերու կարողութենէն, անլուծելի առեղծուած մը մնաց ինծի:

«Միայն գիտեմ թէ մինչեւ այդ վայրը, լման էր իմ հարազատներուս կազմը: Մօրս ու իր հարսերուն պատրաստած






ՆԱՐԵՉԱՍՏԱՆՆԵՐՈՒՆ ԿԱՆՉԸ

ընթերիքը՝ սովորական ձաւարի բիրաւը՝ մեծ ախորժակով կերանք բոլորա: Ընթերիքէն ետք, ուղղակի գետնին վրայ նստած մեծ հօրս ծունկերուն քով կծկուած, լալու չափ յուզուած՝ սկսայ դիտել մօրս, հարսնուկներուս եւ փոքր հարագատներուս դէմքերը, անմեկնելի ջերմութեամբ: Բոլորին, նոյնիսկ ծծկերներուն շրթունքները փակ էին: Մեծ հօրս ծխելու ձեւն անգամ անբնական թուեցաւ ինծի: Յոգնածութի՞նք, թէ՛ անանուն տագնապի մը խռովքն էր ատոր պատճառը, անկարող եղայ զանազանելու: Անբացատրելի նախազգացում մը կը հրդեհէր իմ հոգիս ու ինծի ենթադրել կու տար թէ վերջին անգամն էր որ կը տեսնէի իմ սիրելիները:

«Խոնջանքէն ծանրացող կոպերս տակաւ մթնցող գիշերուան հետ փակեցին իմ աչքերը: Քնացեր եմ. բայց որքա՞ն... չեմ գիտեր: Ահաւոր աղաղակներով լեցուած էր կիրճը, երբ կէս քունկէս արթուն ոտքի ելայ: Ի՞նչ էր պատահած. ինչո՞ւ կը ճչային՝ մօրմէս սկսեալ բոլոր կիները, նոյնիսկ մանուկները. ի՞նչ էր պատճառը այդ խառնաշփոթութեան՝ ոչինչ կրցայ հասկնալ: Տակաւին լրիւ չէի սփաթած, երբ լսեցի մեծ հօրս «ետեւէս եկէք» կանչը: Դէպի ո՞ւր՝ կուպրի պէս այդ գիշերուան մէջ. իմ պատանի ուղեղս տրամաբանելու ատակ չէր: Սկսանք վազել: Միայն մենք չէինք: Կը վազէին բոլորը՝ անպատակ: Արդիւնքը եղաւ զիրար կորսնցնել: Դեռ կը լսեմ մօրս աղիողորմ ճիչն ու սարսափահար աղաղակը...»

«Շ՞րք էր վերջացած, ի՞նչ էր եղած վախճանը այդ խելառ վազքին, ոչինչ կը յիշեմ: Ինծի համար կրկնակիօրէն լուրթին մը տիրեց յանկարծ եւ ճիչ ու աղաղակ դադրեցան միանգամ ընդմիջտ: Միայն կրցայ ենթադրել, երբ ուշքի եկայ...»

«Արդէն քնաթաթախ, առաւել զարհուրած, անգիտակից սրունքներուս օգնած էր անթափանց մութը ու զիս տարած դէպի ձորեզրը եւ... գլտորած անոր յատակը: Արե՞ւն էր զիս գիտակցութեան կանչած, թէ՛ բուն ինքը, կեանքը, ինծի համար միեւնոյն բանն է հիմա: Գիտակցութեան գալով, առաջին արարքս եղաւ ոտքի ելլելու փորձը: Զարմանալի բան, բարտիի մը հասակը ունեցող բարձունքէն վար գլորուած էի եւ սակայն՝ բացի գիտակցութենէս, ոչինչ պատահած էր մարմնիս՝ պատահական քերձուածքներէն եւ գանկիս վերեւ գոյացած կէս ընկոյզի չափ ուռեցքէն գատ: Սկսայ չորեքթաթ բարձրանալ դէպի վեր: Երբ հարթավայր հասայ, իմ շուրջը գտայ գետնամած անթիւ մարմիններ, որոնց վերեւ շուրջպար էին բռնած անթիւ անհամար ճանճերը: Շչմած, շուարած ու անթաղ մեռելադաշտէն սարսափած, ուժ տուի իմ սրունքներուս եւ փախայ այդ դժոխքէն՝




## ՆԱՐՆՁԱՍՏԱՆՆԵՐՈՒՆ ԿԱՆՉԸ

արահետի մը ուղղութիւնը բռնած: Որքա՞ն վագեցի՝ անգուժ արեւին հրաշէկ լեզուներուն տակ, չեմ յիշեր: Իրիկնադէմ էր արդէն: Քայլերս փոխողը ես չէի: Կեանքի եւ գոյատեւելու հօր բնագղը եւ խմելիք ջուրի պահանջն էին զիս յառաջ մղող խթանը: Պուտ մը ջուրի համար հոգիս տալու պատրաստ էի, երբ հեռուէն նշմարեցի գետակի մը արծաթեայ գօտին, որ Աֆրին քաղաքի Աֆրին գետն է եղեր: Ինչպէ՞ս վագեցի ջուրին, այդ մի՛այն ես գիտեմ: Բայց գետեզրին չհասայ. աւելի ճիշդ, չկրցայ հասնիլ: Թուփի մը շուքին նստած գոյգ մը գինուորներուն վրայ ինկայ. գրեթէ ուշակորոյս եւ անընդհատ հեւարով: Ինչպէ՞ս չէի կրցած նշմարել անոնց գոյուլթիւնը հոն: Ոչինչ կը յիշեմ: Միայն գիտեմ թէ լեզուս չորցած էր բերնիս մէջ ու ճաթուտած շրթունքներուս արիւնը կը ծծէի ատենէ մը ի վեր: Անօթութեան պահանջը շատոնց չքացած, ես ջուր կ'երազէի, միայն ջուր...: Ահա այդ գրութեան մէջ էր որ տեսայ գետը, միայն գետը, ուրիշ ոչինչ:

«Զինուորները, որոնց վրայ ինկած էի, գերմանացիներ էին: Գերմանացիներ շատ էի տեսեր մեր երթի երկայնքին: Կարեկցանքի նուազագոյն նշոյլն անգամ չէի գտած անոնց մէջ: Մինչդեռ այդ երկուքը անհաւատալի մարդկայնութեամբ մը օժտուած ըլլալու էին: Իմ խղճալի վիճակս տեսնելով, կարեկցանքի անհաւատալի բարութեամբ մը խնամեցին եւ կեանքին վերադարձուցին զիս: Նոյն իրիկուան շոգեկառքի զնացքով անոնք զիս Հալէպ տարին եւ գերմանական մարդասիրական հաստատութեան մը հայ մանուկներու որբանոցը յանձնեցին:

«Որբանոցային կեանքը երազի մը պէս անցաւ: Տասնօթ տարիքիս թեւակոխած էի 1918-ի սկիզբներուն: Սահուն կերպով կը խօսէի գերմաներէնը: Համեմատաբար առնականացած էր իմ կարճ հասակս: Թէեւ երիտասարդ մը չէի տակաւին, բայց պատանի մըն ալ չէի մնացած:

«Օր մը, որբանոցի վերակացուին կողմէ կանչուելով ներկայացայ իր պաշտօնավայրը: Վերակացուին մօտ նստած էր գերմանացի սպայ մը: Դրան մօտ, դասընկերներէս մէկն էր կեցած՝ այլայլած դէմքով: Վերակացուն անաբօղ հպարտութեամբ մը ներկայացուց զիս ու ընկերս սպային եւ առաջարկեց խօսիլ մեզի հետ գերմաներէնով: Քննութիւնը յաջող անցաւ: Սպային հիացական «չէօն»ներուն (լաւ) տակ քիչ մնաց կքէին մեր նիհարակազմ ուսերը: Նոյն օրն իսկ, ես ու ընկերս գերմանացի գինուորին տարագը հագած՝ թարգմանի պաշտօնով յանձնուեցանք շոգեկառքի կայարանին մէջ գործող գերմանական բանակի հրամանատարին:



ՆԱՐՆՁԱՍՏԱՆՆԵՐՈՒՆ ԿԱՆՉԸ

«Միծաղելի տեսք ունէինք. իմ եւ ընկերոջս հասակները կորսուած էին գինուորական երկար ու լայն համազգեստին մէջ ու մեր ճակատները բոլորովին աներեւութացած՝ երկաթէ գլխարկներուն ներքեւ: Մաղրածուի երեւոյթով ալ, օրն ի բուն կը վազվզէինք մէկ գրասենեակէ միւսը եւ անընդհատ կը թարգմանէինք գերմաներէնէ թուրքերէնի եւ փոխադարձաբար: Միայն գիշերելու համար կ'երթայինք որբանոց:

«Թուրք սպաները մեզի հրահանգելու իրաւունք չունէին: Արդէն, մեր ինքնութիւնը ծանօթ էր քանի մը հատին, որոնց համար գերմանացիներու կողմէ պահուող «պիտէրլիքներ» (սերմնացուններ) էինք մենք: Թէեւ ցոյց չէինք տար թէ կը հասկնայինք իրենց ըսել ուզածը, բայց գերմանացիին վարքը կապկերով շեշտուած կերպով կ'արհամարհէինք թուրք սպաները եւ չէինք պատասխաններ անոնց անպաշտօն հարցումներուն: Եթէ առիթն ալ ներկայանար, ի վնաս թուրքին գործելու չէինք տատամներ մեր թարգմանութիւններու ընթացքին:


«Այդ օր, կայարանին եռուզեռը յոգնեցուցիչ եղած էր: Ժամերով ոտքի վրայ մնալու դատապարտուած էի գերմանացի սպայի մը կողքին, կառաչարքը դասաւորելու համար արձակած հրահանգները թարգմանելով: Վակոնի մը առաջամասի հարթակին վրայ կեցող թուրք սպայի մը վար իջնել հրահանգեց գերմանացին: Հրահանգը թարգմանեցի թուրքին:


«Փաշայա մահուտս տըրը, պրաքամամ երիմի», պատասխանեց անտարբեր շեշտով մը (փաշային յատուկ է, չեմ կրնար ձգել տեղս):

«Իր աստուածը չի կրնար իջեցնել», թարգմանեցի ես գերմանացիին:

«Պիզմարքեան սերունդին այդ գոռոզը, հագիւ գիս լսած՝ ոստումով մը հաւասարեցաւ թուրքին եւ օձիքէն բռնելով վար շարտեց լեցուն տիկի մը նման: Կռնակին վրայ փռուած թուրք սպան դիտեցի շեշտուած անտարբերութեամբ: Բաճկոնէն փրթած կոճակներէն մին կօշիկիս քիթով դէպի իրեն հրեցի, առանց տեղէս շարժելու:

«Աշխատանքի դադար էր: Խոշոր սնտուկի մը վրայ նստած՝ ես ու ընկերս կը ճաշէինք՝ մեզ շրջապատող անցուղարձերուն բոլորովին անտարբեր: Քիչ անդին, մեր դիմաց «փաշայա մահուտստըրը» եղող վակոնն էր եւ «պրաքամամ երիմի» ըսող սպան՝ զգաստ դիրքով: Յանկարծ, խումբ մը թուրք սպաներու առջեւէն, երկարաճիտ կօշիկներ հագած, բարձրաստիճան անձնաւորութիւն մը սկսաւ յառաջանալ «փաշայա մահուտստըրը» վակոնին:





ՆԱՐԵՁԱՍՏԱՆՆԵՐՈՒՆ ԿԱՆՉԸ

«Ո՞վ էր՝ չհետաքրքրուեցայ. բայց ուշադրութիւնս գրաւեց դեռ իր դիրքին մէջ գտնուող իմ գոհը, որ վար իջաւ եւ պատուի կենալով սկսաւ բաներ մը ըսել ու բաճկոնէն փրթած կոճակներն ու զիս մատնացոյց ընել անոր: Ենթադրելու կարիք չկար. կը գանգատէր: Նոյն պահուն ուրիշ սպայ մը մօտեցաւ մեր նստած սնտուկին եւ խօսքը ուղղելով ինձի, ըսաւ.

«— Ծեմալ փաշա սիզի կէօրմէք իստիչօր (Ճեմալ փաշան ձեզ տեսնել կ'ուզէ):

«Անփոյթ շարժումներով վար իջայ նստած տեղէս եւ դանդաղ քայլերով մօտեցայ փաշային:

«— Ալմա՞ն մըսըն, գուգում (Գերմանացի՞ ես, դառնուկս),- հարցուց՝ երբ հաւասարեր էի իրեն:

«— Խաչըր էֆէնտիմ, Էրմինիչիմ (Ոչ, հայ եմ),- պատասխանեցի՝ հայեացքս շեշտակիօրէն պահելով փաշայի աչքերուն եւ աւելցուցի.— Ալման ասկերիչիմ (Գերմանացի գինուոր եմ):

«— Ալման ասկերի մի՞...,- գարմացած բացազանչեց փաշան եւ ապշած երեւոյթով մը հարցուց.

«— Ալմանճաչը ներտէտէ՞ թահսիլ էդդին, գուգում (Գերմանե-րէնը ո՞ւր սորվեցար):

«— Սիրկին չըքտըք... ալման էօքսիլիսանէսինտէ օգուտում... շիմտի թէրճումսանլըք եսփըյօրըմ (Գաղթական ելանք, գերմանական որբանոցին մէջ ուսում առի... հիմա թարգմանութեամբ կը զբաղիմ),- եղաւ իմ համարձակ պատասխանս՝ միշտ նոյն հանդարտութեամբ:


«Փաշային նայուածքը երկարօրէն գամուած մնաց իմ դէմքիս վրայ: Յետոյ, դանդաղօրէն դարձաւ գինք շրջապատող սպաներուն եւ իւրաքանչիւր բառը հատ հատ արտասանելով ըսաւ՝ հեղձուկ շեշտերով. «Սիւրկիւն չըքտըք... ալման էօքսիլգ-խանէսինտէ օգուտում... Ալման ասկերիչիմ... թէրճումէնլիք եսփըյօրըմ...»:


«Պահ մը փաշան լուռ մնաց եւ քանի մը անգամ աջ-ձախ տարուբերելէ ետք գլուխը՝ ափսոսանքի պէս հառաչեց՝ նայուածքը սեւեռած պահելով իր դէմ անշարժացած թուրք սպաներուն վրայ»:

«— Հէ՛յ թիւրքիւք, պու միլլէթ իմհա օլմագ... (Հէյ թրքու-թիւն, այս ազգը բնաջինջ չ'ըլլար):

Համաքաղաքացիս՝ Միսաք Վասիլեանը գլուխը կուրծքին կախած լուեց:

Այսօր, տարիներ ետք, երբ կը վերյիշեմ անհաւատալի, բայց իրական կեանքէն վերցուած այս դրուագը, իմ այնհեր գլուխը կը բարձրացնեմ վեր եւ արդար հպարտութեամբ մը կը դիտեմ





**ՆԱՐԵՉԱՍՏԱՆՆԵՐՈՒՆ ԿԱՆՉԸ**

---

*Եղեոնէն հազիւ 82 տարի ետք, բազմացած, համեմատաբար բարդաւած հայ սփիւռքը եւ խիզախօրէն ոտքի կանգնած նորանկախ հայրենիքը հայուն՝ մեր փառապանծ Հայաստանը եւ ազատագրուած Արցախը, հաստատ համոզումը կ'ունենամ, թէ ջարդարար թուրք ձեմալ փաշան իրապէս մարգարէացած ըլլալու էր այդ պահուն՝ ըսելու համար.*

*«— Պու միլլէթ իմհա օլմագ...»:*

*Հոլիվուտ, 23 Ապրիլ 1997*

